

Կ-610-12.05.2020,09.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք)՝ «քննչական կոմիտեի ծառայող» բառերը եւ դրանց հոլովածները փոխարինել «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» բառերով եւ դրա հոլովածներով.

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 1-ին կետից հանել «հատուկ» բառը.

2. 2-րդ կետի վերջում լրացնել «, ովքեր «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում լացնել նոր՝ 2-րդ մաս.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս քննչական կոմիտեն կարող է ձեւավորել տվյալների բազա, որոնք օգտագործում է բացառապես իր լիազորություններն իրականացնելիս՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելով, որի վարման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «հունվարի 31-ը,» բառերը փոխարինել «ապրիլի 1-ը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «, ինչպես նաեւ քննչական կոմիտեի դեպարտամենտը» բառերը.

2. 2-րդ մասում առաջին նախադասության «բաժինները:» բառից հետո լրացնել «, աջակցող մասնագիտական վարչությունները եւ աջակցող մասնագիտական բաժինները:» բառերը.

3. 2-րդ մասում «կայազորային քննչական բաժինները» բառերից հետո լրացնել «աջակցող մասնագիտական բաժինները:» բառերը, «Երեւան քաղաքի քննչական վարչության բաժինները եւ վարչական շրջանների քննչական բաժինները», բառերը փոխարինել «Երեւան քաղաքի քննչական վարչության բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները եւ վարչական շրջանների քննչական բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները» բառերով, իսկ «մարզային քննչական վարչության տարածքային բաժինները» բառերից հետո լրացնել «աջակցող մասնագիտական բաժինները» բառերը.

4. 4-րդ, 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

5. 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման աշխատողները եւ գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) հաստատում է քննչական կոմիտեի կառուցվածքը, հաստիքացուցակը եւ կանոնադրությունը.».

2. 2-րդ մասում լրացնել նոր՝ 6.1-ին կետ.

«6.1.) դիմում է գլխավոր դատախազին՝ դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ.»:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի՝ 1-ին մասում լրացնել նոր՝ 1.1-ին կետ.

«1.1.) կատարում է աշխատանքի բաժանում իր համակարգման ներքո գտնվող քննչական ստորաբաժանումներում քննիչների միջեւ.»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերում, 31-րդ հոդվածի 6-րդ եւ 11-րդ մասերում, 34-րդ հոդվածի 3-րդ մասում «ծառայող» բառը եւ դրա հոլովածները փոխարինել «քննիչ» բառով եւ դրա հոլովածներով:

Հոդված 9. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԿՈՄԻՏԵԻ» բառով, «ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառը՝ «ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ՋԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ» բառերով, իսկ 16-րդ հոդվածի վերնագրում եւ ամբողջ տեքստում «կոմիտեում ծառայության» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «ծառայության կարող է անցնել» բառերը փոխարինել «պաշտոնի կարող է նշանակվել» բառերով.

2. 1-ին մասի 4-րդ կետում «ցուցակում» բառից հետո լրացնել «բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի եւ նախագահի տեղակալների» բառերը:

3. 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաեւ օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք:».

4. 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզուրյ ի հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել.».

5. 4-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «պաշտոնավարման» բառով:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին» բառերը փոխարինել «ամսվազն տարին մեկ անգամ» բառերով:

2. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3. 3-րդ մասում «գրավոր քննության օրը» բառերը փոխարինել «գրավոր եւ բանավոր քննության օրերը» բառերով.

4. 4-րդ մասի 5-րդ կետում «ծառայությանը» բառը փոխարինել «պաշտոն զբաղեցնելուն» բառերով.

5. 7-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7. Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որից դրական գնահատական ստանալուց հետո նաեւ բանավոր քննություն:

Գրավոր եւ բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ:

Գրավոր եւ բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը եւ լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Քննություններից դրական գնահատական եւ հարցաթերթիկի լրացման արդյունքում դրական եզրակացություն ստացած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

6. 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն 3 տարի ժամկետով ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում: Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածում անձը երկու անգամ ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ ստանալու եւ դրանից հրաժարվելու դեպքում հանվում է թեկնածությունների ցուցակից:

Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում, անձը կարող է դիմել որակավորման հանձնաժողովին իր գործնական եւ տեսական ունակությունները ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը եւս 3 տարի ժամկետով շարունակում է ընդգրկված մնալ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2-րդ մաս.

«2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվում է 5 տարի ժամկետով»:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ծառայության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով:

Հոդված 14. Օրենքի 26-րդ հոդվածի վերնագրից, 1-ին մասի 2-րդ կետից, 27-րդ հոդվածների վերնագրերից, 28-րդ հոդվածի 1-ին մասից, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ կետերից հանել «ծառայողական» բառերը:

Հոդված 15. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «երկարամյա ծառայության» բառերը փոխարինել «երկարամյա պաշտոնավարման» բառերով.

2. 3-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «պաշտոնավարման» բառով.

3. 5-րդ մասից հետո լրացնել նոր` 5.1-ին մաս.

«5.1 Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք վարչապետի կողմից կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների եւ կոչումների:»:

Հոդված 16. Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասում «պարգևատրմամբ» բառից հետո լրացնել «մեղալուծ կամ կրծքանշանով» բառերը:

Հոդված 17. Օրենքի 30-րդ հոդվածը`

1. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին եւ 2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են միայն ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

2.2 Մինչեւ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժ նշանակելը, կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձից: Եթե բացատրությունում կարգապահական խախտում թույլ տված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի ընդունում կատարված խախտման մեջ իր մեղավորությունը, ապա անցկացվում է ծառայողական քննություն:»:

Հոդված 18. Օրենքի 31-րդ հոդվածը`

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են` նախնական ուսումնասիրություն եւ կարգապահական վարույթ:

Կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ` քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որեւէ անդամի միջնորդությամբ:»:

2. լրացնել նոր` 1.1-ին մաս.

«1.1. Քննչական կոմիտեում կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 19. Օրենքի 32-րդ հոդվածում լրացնել նոր` 5-րդ մաս.

«5.Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա պաշտոնը ժամանակավորապես զբաղեցվում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի համաձայն, իսկ դրա անհնարինության դեպքում սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող անձանց կողմից, մինչեւ համապատասխան հիմքի վերացումը:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերաբերյալ արդարացման որոշման օրինական ուժի մեջ մտնելու դեպքում անձը նշանակվում է իր նախկին պաշտոնում, իսկ դրա անհնարինության կամ համաձայնություն չտալու դեպքում անձին առաջարկվում է այլ հավասարազոր պաշտոն: Եթե նա գրավոր հրաժարվում է հավասարազոր պաշտոնում նշանակվելուց, ապա սույն օրենքի 22.1-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցվում է կադրերի ռեզերվում:

Պաշտոնը ժամանակավորապես զբաղեցրած անձը, եթե հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց՝ ընդգրկվում է կադրերի ռեզերվում:»:

Հոդված 20. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «գործուղվել» բառից հետո լրացնել «այլ քննչական մարմին,» բառերը, հանել՝ «այլ ծառայության» բառը, իսկ «պատճառով» բառից հետո լրացնել «կամ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով» բառերը.

2. 2-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով.

3. 4-րդ մասում «գործուղվել» բառից հետո լրացնել «, բացառությամբ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով այլ քննչական մարմին կամ մարզային քննչական ստորաբաժանման ներսում գործուղվելու դեպքերի:» բառերը:

Հոդված 21. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1. լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1 Որակավորման հանձնաժողովի կողմից՝ յուրաքանչյուր մեկ տարի վեց ամիս հաճախականությամբ ստուգվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական եւ տեսական ունակությունները, որն անցկացնելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:».

2. լրացնել նոր՝ 2.2-րդ մաս.

«2.2 Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ստուգման արդյունքները հիմք են հանդիսանում արտահերթ ատեստավորման համար:».

3. 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների պետերը եւ նրանց տեղակալները:»:

Հոդված 22. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերը՝ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով:

Հոդված 23. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերը փոխարինել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» բառերով:

Հոդված 24. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում «ծառայության նշանակմամբ կամ ծառայության գործուղմամբ» բառերը փոխարինել «աշխատանքի նշանակմամբ կամ գործուղմամբ» բառերով:

Հոդված 25. Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասում «դեպարտամենտում» բառը փոխարինել «քաղաքացիական» բառով:

Հոդված 26. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսյա ժամկետում քննչական կոմիտեի նախագահի հրամաններով սահմանվում են տվյալների բազայի վարման կարգը, գրավոր եւ բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը եւ լրացման կարգը, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական եւ տեսական

ունակությունների ստուգում անցկացնելու կարգը, ինչպես նաև քննչական կոմիտեում կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը:

Կ-610-12.05.2020,09.09.2020-ՊԻ-011/0

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք)՝ «քննչական կոմիտեի ծառայող» բառերը եւ դրանց հոլովածները փոխարինել «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» բառերով եւ դրա հոլովածներով.

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 1-ին կետից հանել «հատուկ» բառը.

2. 2-րդ կետի վերջում լրացնել «, ովքեր «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում լացնել նոր՝ 2-րդ մաս.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս քննչական կոմիտեն կարող է ձեւավորել [տեղեկատվական շտեմարաններ](#), [տվյալների բազա](#), որոնք օգտագործում է բացառապես իր լիազորություններն իրականացնելիս՝ [օրենքով օրենսդրությամբ](#) սահմանված պահանջները պահպանելով, [որի վարման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը](#):»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «հունվարի 31-ը,» բառերը փոխարինել «ապրիլի 1-ը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «, ինչպես նաեւ քննչական կոմիտեի դեպարտամենտը» բառերը.

2. 2-րդ մասում առաջին նախադասության «բաժինները:» բառից հետո լրացնել «, աջակցող մասնագիտական վարչությունները եւ աջակցող մասնագիտական բաժինները:» բառերը.

3. 2-րդ մասում «կայազորային քննչական բաժինները» բառերից հետո լրացնել «աջակցող մասնագիտական բաժինները:» բառերը, «Երեւան քաղաքի քննչական վարչության բաժինները եւ վարչական շրջանների քննչական բաժինները», բառերը փոխարինել «Երեւան քաղաքի քննչական վարչության բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները եւ վարչական շրջանների քննչական բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները» բառերով, իսկ «մարզային քննչական վարչության տարածքային բաժինները» բառերից հետո լրացնել «աջակցող մասնագիտական բաժինները» բառերը.

4. 4-րդ, 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

5. 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման աշխատողները եւ գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հաստատում է քննչական կոմիտեի կառուցվածքը, հաստիքացուցակը եւ կանոնադրությունը.».

2. 2-րդ մասում լրացնել նոր՝ 6.1-ին կետ.

«6.1.) դիմում է գլխավոր դատախազին՝ դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ.»:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի՝ 1-ին մասում լրացնել նոր՝ 1.1-ին կետ.

«1.1.) կատարում է աշխատանքի բաժանում իր համակարգման ներքո գտնվող քննչական ստորաբաժանումներում քննիչների միջեւ.»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերում, 31-րդ հոդվածի 6-րդ եւ 11-րդ մասերում, 34-րդ հոդվածի 3-րդ մասում «ծառայող» բառը եւ դրա հոլովածները փոխարինել «քննիչ» բառով եւ դրա հոլովածներով:

Հոդված 9. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԿՈՄԻՏԵԻ» բառով, «ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառը՝ «ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՐ ՊԱՇՏՈՆ ՋԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՉԱՆՑ» բառերով, իսկ 16-րդ հոդվածի վերնագրում եւ ամբողջ տեքստում «կոմիտեում ծառայության» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «ծառայության կարող է անցնել» բառերը փոխարինել «պաշտոնի կարող է նշանակվել» բառերով.

2. 1-ին մասի 4-րդ կետում «ցուցակում» բառից հետո լրացնել «բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի եւ նախագահի տեղակալների» բառերը:

3. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաեւ օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք:».

~~4. 3-րդ մասում «ծառայության չի կարող անցնել» բառերը փոխարինել «պաշտոնի չի կարող նշանակվել» բառերով.~~

4. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզգույշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել.».

5. 4-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «պաշտոնավարման» բառով:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին» բառերը փոխարինել «ամսվազն տարին մեկ անգամ» բառերով:

2. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3. 3-րդ մասում «գրավոր քննության օրը» բառերը փոխարինել «գրավոր եւ բանավոր քննության օրերը» բառերով.

4. 4-րդ մասի 5-րդ կետում «ծառայությանը» բառը փոխարինել «պաշտոն զբաղեցնելուն» բառերով.

5. 7-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7. Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որից դրական գնահատական ստանալուց հետո նաեւ բանավոր քննություն:

Գրավոր եւ բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ:

Գրավոր եւ բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը եւ լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Քննություններից դրական գնահատական եւ հարցաթերթիկի լրացման արդյունքում դրական եզրակացություն ստացած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

6. 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն 3 տարի ժամկետով ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում: Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածում անձը երկու անգամ ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ ստանալու եւ դրանից հրաժարվելու դեպքում հանվում է թեկնածությունների ցուցակից:

Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում, անձը կարող է դիմել որակավորման հանձնաժողովին իր գործնական եւ տեսական ունակությունները ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը եւս 3 տարի ժամկետով շարունակում է ընդգրկված մնալ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում:»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2-րդ մաս.

«2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվում է 5 տարի ժամկետով:»:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ծառայության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով:

Հոդված 14. Օրենքի 26-րդ հոդվածի վերնագրից, 1-ին մասի 2-րդ կետից, 27-րդ հոդվածների վերնագրերից, 28-րդ հոդվածի 1-ին մասից, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ կետերից հանել «ծառայողական» բառերը:

Հոդված 15. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «երկարամյա ծառայության» բառերը փոխարինել «երկարամյա պաշտոնավարման» բառերով.

2. 3-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «պաշտոնավարման» բառով.

3. 5-րդ մասից հետո լրացնել նոր՝ 5.1-ին մաս.

«5.1 Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք վարչապետի կողմից կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների եւ կոչումների:».

Հոդված 16. Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասում «պարգևատրմամբ» բառից հետո լրացնել «մեդալով կամ կրծքանշանով» բառերը:

Հոդված 17. Օրենքի 30-րդ հոդվածը՝

1. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին եւ 2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են միայն ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

2.2 Մինչեւ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժ նշանակելը, կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձից: Եթե բացատրությունում կարգապահական խախտում թույլ տված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի ընդունում կատարված խախտման մեջ իր մեղավորությունը, ապա անցկացվում է ծառայողական քննություն:».

Հոդված 18. Օրենքի 31-րդ հոդվածը՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են՝ նախնական ուսումնասիրություն եւ կարգապահական վարույթ:

Կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որեւէ անդամի միջնորդությամբ:».

2. լրացնել նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Քննչական կոմիտեում կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 19. Օրենքի 32-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5-րդ մաս.

«5. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա պաշտոնը ժամանակավորապես զբաղեցվում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի համաձայն, իսկ դրա անհնարինության դեպքում սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող անձանց կողմից, մինչեւ համապատասխան հիմքի վերացումը:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերաբերյալ արդարացման որոշման օրինական ուժի մեջ մտնելու դեպքում անձը նշանակվում է իր նախկին պաշտոնում, իսկ դրա անհնարինության կամ համաձայնություն չտալու դեպքում անձին առաջարկվում է այլ հավասարազոր պաշտոն: Եթե նա գրավոր հրաժարվում է հավասարազոր պաշտոնում նշանակվելուց, ապա սույն օրենքի 22.1-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցվում է կադրերի ռեզերվում:

Պաշտոնը ժամանակավորապես զբաղեցրած անձը, եթե հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց՝ ընդգրկվում է կադրերի ռեզերվում:»:

Հոդված 20. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «գործուղվել» բառից հետո լրացնել «այլ քննչական մարմին,» բառերը, հանել՝ «այլ ծառայության» բառը, իսկ «պատճառով» բառից հետո լրացնել «կամ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով» բառերը.

2. 2-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով.

3. 4-րդ մասում «գործուղվել» բառից հետո լրացնել «, բացառությամբ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով այլ քննչական մարմին կամ մարզային քննչական ստորաբաժանման ներսում գործուղվելու դեպքերի:» բառերը:

Հոդված 21. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1. լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1 Որակավորման հանձնաժողովի կողմից՝ յուրաքանչյուր մեկ տարի վեց ամիս հաճախականությամբ ստուգվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական եւ տեսական ունակությունները, որն անցկացնելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:».

2. լրացնել նոր՝ 2.2-րդ մաս.

«2.2 Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ստուգման արդյունքները հիմք են հանդիսանում արտահերթ ատեստավորման համար:».

3. 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների պետերը եւ նրանց տեղակալները.»:

Հոդված 22. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերը՝ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով:

Հոդված 23. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերը փոխարինել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» բառերով:

Հոդված 24. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում «ծառայության նշանակմամբ կամ ծառայության գործուղմամբ» բառերը փոխարինել «աշխատանքի նշանակմամբ կամ գործուղմամբ» բառերով:

Հոդված 25. Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասում «դեպարտամենտում» բառը փոխարինել «քաղաքացիական» բառով:

Հոդված 26. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսյա ժամկետում քննչական կոմիտեի նախագահի հրամաններով սահմանվում են [տվյալների բազայի վարման կարգը](#), գրավոր եւ բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը եւ լրացման կարգը, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական եւ տեսական ունակությունների ստուգում անցկացնելու կարգը, ինչպես նաեւ քննչական կոմիտեում կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ([Կ-610-12.05.2020,09.09.2020-ՊԻ-011/1](#)) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված (Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր` 2-րդ մաս)	<p>Հիշյալ հոդվածում «տեղեկատվական շտեմարան» բառերը փոխարինվել են «տվյալների բազա» բառերով:</p> <p>Նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «տեղեկատվական շտեմարան» հասկացությունը, իսկ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է «տվյալների բազա» հասկացությունը, որը որոշակի հատկանիշներով համակարգված անձնական տվյալների ամբողջությունն է, ուստի անհրաժեշտություն է առաջանում «տեղեկատվական շտեմարան» բառերը փոխարինել «տվյալների բազա» բառերով:</p>	<p>Ընդունվել է.</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն.</p>	<p>Ընդունվել է</p>
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված (Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր` 2-րդ մաս)	<p>1) Հիշյալ հոդվածում «օրենքով» բառը փոխարինվել է «օրենսդրությամբ» բառով:</p> <p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ձեւավորվող տվյալների բազան օգտագործելիս պահպանվելու են մի շարք օրենքներով (Քրեական դատավարության օրենսգիրք, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Տեղեկատվության ազատության մասին»</p>	<p>Ընդունվել է.</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն.</p>	<p>Ընդունվել է</p>

			<p>օրենքներ) և ենթաօրենսդրական ակտերով («Կենսաաշակական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալների պահպանման տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1175-Ն, «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն, «Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 29-ի N 1849-Ն որոշումներ) սահմանված պահանջներ, ուստի տարընթերցում և տարընկալում չառաջացնելու նպատակով կատարվել է հիշյալ եզրույթի փոփոխություն:</p> <p>2) Միաժամանակ, «պահպանելով» բառից հետո լրացվել է «որի վարման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը» բառերը:</p> <p>Այս համատեքստում գտնում ենք, որ անձնական տվյալների տեղեկատվական բազան վարելու Կոմիտեի իրավասությունը նախատեսելը բավարար չէ անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու և անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանելու</p>		
--	--	--	---	--	--

			<p>համար, ուստի անհրաժեշտ է նաև սահմանել անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական շտեմարանների վարման, տվյալների պահպանման, փոխանցման, մատչելիության, տվյալների անվտանգության ապահովման տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների կարգը և պայմանները:</p> <p>Ընդ որում, հաշվի առնելով, որ տվյալները ստացվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, անհրաժեշտություն է առաջանում նախատեսել, որ տվյալների բազայի վարման կարգը սահմանվում է քննչական կոմիտեի նախագահի կողմից (Օրենքով կամ համապատասխան հղմամբ՝ ակտով՝ չխախտելով անձնական տվյալների մշակում ուղղակիորեն օրենքով նախատեսված լինելու կանոնը):</p> <p>Այսպիսով, հիշյալ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս քննչական կոմիտեն կարող է ձեւավորել տվյալների բազա, որոնք օգտագործում է բացառապես իր լիազորություններն իրականացնելիս՝ <i>օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելով, որի վարման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:</i>»:</p>		
<p>3.</p>	<p>«Կառավարություն</p>	<p>Նախագծի 10-րդ հոդված 4-րդ մաս (Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս)</p>	<p>Հիշյալ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ.</p> <p>«3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անգագույշ հանցագործության դեպքում՝ մինչև</p>	<p>Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն.</p>	<p>Ընդունվել է</p>

			<p>դատվածությունը չի մարվել կամ հանվել».</p> <p>Հիշյալ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, թե ովքեր չեն կարող անցնել Կոմիտեում ծառայության, որի 3-րդ կետը վերաբերվում է այն անձանց, ովքեր դատապարտվել են հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից, և ում նկատմամբ առկա է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:</p> <p>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Սույն նորմն արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ Կոմիտեի ծառայողի պաշտոններ զբաղեցնելու համար»:</p> <p>Հետևաբար, Նախագծով առաջարկվում է վերոնշյալ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզույշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել».</p> <p>ինչպես դա ներկայացված է՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում (ընդունված 2018թ.-ին), «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում:</p> <p>Նշված դեպքն անհրաժեշտ է դիտարկել որպես բացառություն, որը չի կարող զրկել կամ սահմանափակել Կոմիտեում ծառայության անցնելուն:</p>		
--	--	--	--	--	--